

համարում, երբեմն մեր արեւելեան տառադարձութիւնը ընդունելով և երբեմն արեւմտեան, Յորինակներ գրքի ամեն երեսում կարելի է գտնել. իսկ ընդ մի քանիսը. եւրոպական grame բառը նա մեղադէս գրում է «Գրամ», իսկ carat՝ գրում է գրադ, Անհասկանալի հակասութիւն. ըստ նորա դուրս է գալիս որ  $g = q$  և  $c = q$  ուրեմն  $g = c$  (?), Նա գրում է Գալ (Gallium), Բիսմութ (Bismuth), Դիդիմ (Didyme), — Բազ Կազ (gaz), Լըպլան (Léblanc), Տիւլոն և Բթի (Dulong et Petit), Վենետիկ (Venedig),

Գիրքը տպւած է գեղեցիկ տառերով և զարդարւած սիրուն նկարներով, բազ զերծ չէ խոշոր սխալներից, որոնք վաղել չեն մի ձեռն արկի, օրինակ՝ առաջին մասում երես 41 ներքեկից 5-երորդը տողում կարդում ենք. «և սառուցը  $4^{\circ}$  Զբէ տաւն (II) անգամ անլի տարածոց կը գրաւէ»,

Բազմաթիւ են և զուտ տպագրական սխալները, որ նորնպէս անտեղի են ձեռն արկում. եր. 50 վ. 11 տ. տպւած է. «1 տարածոց Զրածնի և 3 տարածոց ըտրականնի՝ կուտան և ալն» 1 և 3 թւերի տեղը հարկաւոր է փոխել, Երես 58 Ն. 6 տողում կոտորակի համարիչի և լատարարի տեղերն էլ փոխելու է. Մի ալ տեղ (եր. 95, 6-դ տ. ներքեկից) «Թթւածնի» խօսքի տեղ «Զրածնի» է տպւած և ալն, ինչպէս տեսնում էք, իբրեւ ձեռնարկ, շատ անխնամ է սրբագրւած և ալնու ամենալնիւ հեղինակը անլորդ է համարել կցել իւր գրքին վերիակներից ցանկը, Թող ների մեղ Հ. Պաւլոսը, որ համարձակւում ենք խորհուրդ տալ նորան գտնէ ալժմ, քանի որ զեռ ուշ չէ, կազմել և կցել իւր «Տարրաբանութեան» մեր վերեւ լիշած ցանկը:

Մ. Տ.-Ա.

## Նոր ստացւած գրքեր

1) «ՆԴԻՇԷԻ պատմութիւն վարդապետաց ըստ Արձնացեաց օրինակի», Մանթութիւններով և հալ-ոտւանքէն բառագրքով ի լոյս ընծաւեց ուսուց. Լազարեան ճեմարանի Արեւելեան լեզուաց Խ. Յովհաննիսեանց, Մոսկւա, տպար. Մկրտիչ Բարխուդարեանցի, 1892 թ., գինն է 1 ռ. 50 կոպէկ:

2) ՄԱՆՈՒՄԵԱՆ, Խ. — «ԽՐԻՄԵԱՆ», Կենսագրական տեսութիւն (պատկերով), Թիֆլիս, Կովկասեան կառավարչապետի տպարան, 1892 թ. գինն է 40 կոպէկ:

ՇՁՆԴԻՐԻՆ. — 1) «Իշխալիստ ծածան»

2) «Իմաստուն ծանծաղով»

3) «Խիղճը կորաւ»:

{ Թարգ. Մ. Ղազարեանց,  
Հրատ. հալոց Հր. Բնկ.  
Թիֆ. տպ. Ռոտ. գ. 15 կ.